

Բացի Մելիքսեբեքեզի աշխատութիւններէն, յոյս է տեսել վերջինիս աշակերտ հայագիտութեան ամբիւնի երիտասարդ դասախօս վրացի Իլիա

Աբաւլաճէի «Հայկական Քրեստոմտօտիա» հատորը՝ քերականական աղիւսակներով եւ հայ - վրացերէն բառարանով:

«ՅԱՌԱՋ»-Ի ՏԱՍՆԱՄՆԱԿԸ

Օգոստ. 2-ին լրացաւ «Յառաջ» օրաքերթի տասնամեակը: Տասը տարի առաջ, համեստ պայմաններում, սկսեց այս գործը, իբրեւ փոքրածաւալ երկօրեայ քերթ: 17 ամիս անցած, 1927-ի սկիզբը, արդէն օրաքերթ էր: Իսկ մի քանի տարի յետոյ աւելացաւ եւ ծաւալը: Այսօր «Յառաջ»-ն արդէն մեծածաւալ ժողովրդական լրագիր է, որ առաջնակարգ տեղ է գրաւում հայ մամուլի ընտանիքում: Նրա շուրջ համախորհրած են ոչ միայն Ֆրանսայի, այլ եւ բովանդակ Հայ Սփիւռքի մտաւորական բազմաթիւ գրիչներ: Նրա յայտնած կարծիքներին ականջ են դնում ոչ միայն գաղափարակիցները, այլեւ հակաակորդ հոսանքների մարդիկ: Իբ-

րեւ Հ. Յ. Դաշնակցութեան Ար. Եւրպայի Կենտր. Կոմիտէութեան բերան՝ «Յառաջ»-ը չի սահմանափակուում միայն իր կուսակցութեան շրջանակով, այլ բառիս բուն նշանակութեամբ համաժողովրդական քերթ է՝ հայ ազգային քաղաքականութեան եւ մշակոյթի, հայ ընկերային ու տնտեսական կեանքի ջատագովն ու դրօշակիրը: Տասնամեակի աթիւ արտայայտած համակրանքի այնքան ինքնաբերական զգացումները պարզ ապացոյցներ են, որ խմբագիր Շ. Միսաքեանի եւ նրա մերձաւոր աշխատակիցների քափած տասնամեայ ջանքերը ապարդիւն չեն անցել. «Յառաջ»-ը այսօր հայ կեանքի աներածեշտ մէկ գործօնն է:

«ՅՈՒՍԱԲԵՐ»-Ի ՆՈՐ ԲԱՑԱՌԻԿԸ

Աստուածաշնչի քարգմանութեան 1500 ամեակի կապակցութեամբ «Յուսաբեր» որոշել է հրատարակել բացառիկ մի թիւ՝ Ֆիրդուսիին նւիրած բացառիկի ձեւով: Թիւը յոյս է տեսնելու այս տարւայ վերջը եւ պարունակելու է բազմազան նիւթեր՝ հայ հին ու

նոր մշակոյթի բնագաւառից: Աշխատակիցներին առաջարկւած է 60 ամում նիւթ՝ հայ ազգի ցեղային ծագումից սկսած մինչեւ Հայաստանի եւրոպայի օրերը: Յօդածները առաջնաւոր իբրեւ վերջնական բւական նշանակւած է նույնքերը 15:

